**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 870-Ա

## ՍՈՒԼԻԿՈ ՇԱՀԵՆԻ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի N 88 որոշմամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 02.02.2002 N91 որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի բնակիչ Սուլիկո Շուշանյանի սեփականությունը հանդիսացող /վկայական 2132143/, Շողակաթ բնակավայր, 1-ին փող., 17/1 հասցեում գտնվող խանութի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին դիմումը, հաշվի առնելով, որ շենքի ընդհանուր չափերի և շինարարական կոնստրուկցիաների փոփոխություն չի կատարվել, նախագծային փաստաթղթերի անհրաժեշտություն չկա, ուստի.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Փոխել Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի 1-ին փող., 17/1 հասցեում գտնվող խանութի գործառնական նշանակությունը որպես բնակելի տան՝ հաշվի առնելով, որ շենքի գործառնական նշանակությունը փոխելու հետ կապված շինարարական աշխատանքներն իրականացվել են ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերին համապատասխան, շինության ընդհանուր չափերի և շինարարական կոնստրուկցիաների փոփոխություն չի կատարվել:Հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:
2. Սուլիկո Շուշանյանը պարտավոր է համայնքային բյուջե 900185065134 հաշվե համարին վճարել 305000 /երեք հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ,որպես հողի կադաստրային արժեք:
3. Անվավեր ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի 18.07.2025թ. թիվ 529-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2025թ. նոյեմբերի 12
ք. Ճամբարակ